

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

576.8  
7-49

29 JUL 2010

49

ՊՈՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ




15

ԲՇԱԳԻՏԱԿԱՆ ՍԵՐԻԱ

15

ՅԵ. ԴԻՆԵՍՄԱՆ

ՄԱՐԴՈՒ ԱՆԵՐԵՎՈՒՅԹ  
ԲԱՐԵՎԱՄՆԵՐՆ  
ՈՒ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ



ՊԵՏԼԵՐԻՍ-ՅԵՐԵՎԱՆ

13496

576.8  
7-49

3.04.2013

ՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
N 15 ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՍԵՐԻՅԱ N 15

ՅԵ. ԴԻՆԵՍՄԱՆ

ՄԱՐԴՈՒ ԱՆԵՐԵՎՈՒՅԹ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՆ  
ՈՒ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

1686

Թարգմ. Մ. Զ.



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1928

ՄԱՐԴՈՒ ԱՆԵՐԵՎՈՒՅԹ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՆ  
ՈՒ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

I.

ՊՆԵՐԵՎՈՒՅՐ ԿԵՆՊԱՆԻ ԵԱԿՆԵՐ: Մանրագիտակի գյուտի նշանակությունը մանրեցնելի ուսումնասիրության գործում: Մանրեցնելի բաժանումը զանազան խմբերի: Նրանց կազմության պարզությունը: Մանրեցնելի նշանակությունը մարզու համար:

Մարզս ապրում է կենդանի եակների միջավայրում: Մառ, խոտ, ծաղիկ, գազան, թռչուն և միջատ—բոլորն էլ ապրում են:

Մենք շրջապատված ենք վերև հիշած տեսանելի կենդանի եակներով: Սակայն՝ բացի տեսանելի կենդանի եակներից, մարզս շրջապատված է նաև անտեսանելի կենդանի որդանիզմների հսկայագույն մի աշխարհով: Այդ աներևույթ կենդանի եակներն ամենուրեք կան: Ամենից առաջ նրանք մեծ քանակությամբ ապրում են հենց մարզու վրա և մարզու մեջ: Որինակ, նրա հագուստների և մաշկի վրա, բերանի, քթի, մարսողության որդանների մեջ և այլն: Աներևույթ կենդանի եակները մեծ բազմություններ ապրում են մեր խմելու ջրի մեջ, մեր շնչած ոդի մեջ, այն հողի տակ, վորի վրա մենք քայլում ենք: Մի խոսքով—ամենուրեք և ամեն տեղ:


Բայց այդ կենդանի եակների աշխարհը մեզ համար անտեսանելի յե, վորովհետև նրանք չափազանց մանր են: Այդպիսի մանր կենդանի եակներին կարելի չե տեսնել միայն առանձին գործիքի—մանրադիտակի ոգնություններ (նկ. 1):

Մանրագիտակի տակ դիտելիս, մենք ամեն ինչ ան-

համեմատ ավելի մեծ ենք տեսնում, քան իրապես նրանք են: Մանր եակները մենք տեսնում ենք բազմաթիվ անգամ խոշորացած:

Մինչև մանրադիտակի հնարելը, այդ մանրագույն կենդանի եակների աշխարհը մարդու համար մի գաղտնիք էր: Մարդիկ միայն յենթադրաբար էյին խոսում, ինչ վոր աներևույթ կենդանի եակների մասին:

Հոլլանդացի գիտնական Անտոն Լեվենհուկը, վոր սպորում էր 1632 – 1723 թ. կարողացավ այնպիսի վոզորկ ապակիներ պատրաստել, վորոնց միջով առարկաները դիտելիս, 270 անգամ ավելի մեծացած էյին յերևում: Այդ ապակիների միջով նա տեսավ կենդանի եակների մի աշխարհ, վորը շափազանց նրան զարմացրեց: Լեվենհուկը վերցրեց ատամների վրա գոյացած սպիտակ փառը, ջրի



ապակիներ պատրաստել, վորոնց միջով առարկաները դիտելիս, 270 անգամ ավելի մեծացած էյին յերևում: Այդ ապակիների միջով նա տեսավ կենդանի եակների մի աշխարհ, վորը շափազանց նրան զարմացրեց: Լեվենհուկը վերցրեց ատամների վրա գոյացած սպիտակ փառը, ջրի



Նկ. 1. Ժամանակակից մանրադիտակը:

Նկ. 2. Լեվենհուկի մանրադիտակը. ա. առարկայի կողմը, բ. քի ախշողմը:

հետ խառնեց, նրանից մի կաթիլ դրեց մանրադիտակի տակ և շատ զարմացավ, յերբ իր առաջ տեսավ կենդանի եակների մի հսկա բազմութուն, արագ շարժվելիս:

Նա առաջին գիտնականն էր, վոր զբաղվեց մեզ համար անտեսանելի աշխարհի ուսումնասիրությամբ: Նա առաջին գիտնականն էր նույնպես, վորին հաջողվեց նկատել մանրագույն կենդանի եակներին, և նրանց չուրահատուկ շարժումները:

Նրանից շատ տարիներ հետո միայն ուրիշ գիտնականներ շարունակեցին դիտել կենդանի մանրագույն որգանիգմները, առանց կարողանալու բացատրել այն նշանակութունը, վոր ունեն այն շնչին արարածներն իրենց կենդանի գործունեյությամբ ամբողջ բնության համար:

Յեվ միայն Լեվենհուկից 200 տարի հետո, Ֆրանսիացի գիտնական Լուի Պաստերը զբաղվեց նրանց խորը ուսումնասիրությամբ և մեր առաջ բաց արեց նրանց կյանքի գաղտնիքները:

Այժմ արդեն մի ամբողջ գիտութուն գոյություն ունի, վոր զբաղված է մանրագույն կենդանի եակների ուսումնասիրությամբ: Այդ գիտությունը կոչվում է—միկրոբիոլոգիա: Այս բառը հունական լեզվից է վերցրած, վոր յեթե հայերեն վերածենք, կնշանակե—մանր կյանքերի ուսումնասիրություն—մանր եաբանություն: Իսկ իրանք՝ կենդանի եակներն ստացան միկրոբ—մանր բնդհանուր անունը:

Միկրոբները շափազանց փոքր և պարզ կառուցվածք ունենալով հանդերձ, շատ բազմազան են, և իրարից շատ տարբեր, այդ պատճառով գիտությունը նրանց բաժանել է մի քանի առանձին խմբերի: Ամեն խումբ ունի իր հատուկ անունը:

Այդ խմբերից ամենատարածվածները բակտերիա անունն են ստացել: Այս բառն էլ հունարեն է և նշանակում է «ձողիկ»: Միկրոբների այս խմբի մեջ մտնում են բազմաթիվ ձողանման եակներ, թեև նրանց մեջ կան նաև ուրիշ ձև ունեցողներ: Իսկ ուրիշ շատ մանր ձողիկներ, վորոնց յերկարությունը լայնությունից վոնջնով չի տար-

բերվում, ընդունված և կոչել—բացիլլներ. սա յեւ լա-  
տիններեն բառ և, վոր դարձյալ նշանակում և «ձողիկ»

Բակտերիաներ», իրանց ձևերին նայելով յերեք կար-  
գի չեն բաժանվում: Նրանք լինում են զնդաձև, ձողաձև  
և թելանման, իրանց զանազան խմբավորումներով (նը-  
կար 4 ):




Նկ. 3. Լուի Պաստոր

Մեզ շրջապատող բոլոր կենդանիներից ու բույսե-  
րից՝ միկրոօրգանիզմը տարբերվում են իրանց արտաքին պար-  
զուլթյամբ, վոր սերտ կապ ունի նրանց կենցաղի պար-  
զուլթյան հետ:

Այսպես ուրեմն միկրոօրգանիզմը չափազանց մանր և  
պարզ կառուցվածք ունեցող կենդանի էակներ են: Միկ-  
րոօրգանիզմը ամեն տեղ և ամենուրեք կան: Նրանց թիվը աշ-  
խարհիս չերեսին անհամար է և նրանց նշանակությունը  
շատ մեծ է ամբողջ կենդանի աշխարհի, ինչպես նաև  
մարդու համար: Նրանք սերտ կապված են մարդու կյան-

քի հետ և դառնում են յերբեմն նրա աներևույթ բա-  
րեկամները, յերբեմն ընդհակառակը, նրա ամենադաժան  
թշնամիները:



Նկ. 4. Զանազան ձևի բակտերիաներ.

Տեսնենք, թե ինչ նշանակություն ունեն միկրոօրգան-  
իզմը ամբողջ բնության համար և ի՞նչ ոգուտ կամ ի՞նչ վը-  
նաս են նրանք բերում մարդուն:

II

Կյանքի յեզ մահվան ԵՐՉԱՃԱՌՈՒՄՆԵՐ: Միկրոօրգանիզմի նշանա-  
կությունն այս ԵՐՉԱՃԱՌՈՒՄՆԵՐ մեջ: Փետուկ: Փետուկ առաջաց-  
նող միկրոօրգանիզմ: Կանաչ բույսերի յեզ կենդանիների սննդա-  
ուղիքներ: Կենդանական աշխարհի կախումը կանաչ բույ-  
սերից:

Ամեն կենդանի էակ վերջ ի վերջո մեռնում է—  
դաշտային չնչին խոտը, թե հզոր կաղնին, պստիկ միջա-  
տը, թե յերկրագնդին տիրող մարդը:

Ամեն մեռած էակ՝ քայքայվելով գետնի վրա, թե

գետնի տակ, դառնում է բազմաթիվ նոր կյանքերի համար շինարար նյութ:

Կյանքն ու մահը հավիտենական շրջանառության մեջ են: Կյանքը փոխվում է մահի, իսկ մահին հետևում է կյանքը:

Շատ պիտի զարմանա ընթերցողը, յեթե իմանա, վոր կյանքի ու մահվան շրջանառության մեջ գլխավոր դեր խաղացողները միկրոբներն են:

Մեր ամենորյա կյանքում հաճախ առիթ է լինում դիտելու, վոր միսը, ձուկը և ձուն, յեթե միառժամանակ մնում են անզործածելի, մանավանդ տաք տեղում, փրչանում են: Միսը, ձուն և ձուկը, ինչպես ասում են «հոտում» են:


Ի՞նչ է պատահում այդ մթերքների հետ, վոր նըրանք սկսում են փտել: Առհասարակ ամեն «նեխած» բան մեր մեջ նողկանք է առաջ բերում, վորովհետև համարյա միշտ նա իրանից արձակում է զգվելի հոտ: Այդ հոտը բացատրվում է նրանով, վոր փտելու ժամանակ՝ փտող մարմնի մեջ առանձին անախորժ հոտով զագեր են առաջանում: Որինակ հոտած ձվից արձակվող զագը—ծծմբաշրածինն է: Իսկ յեթե ճշմարիտն ուզում եք իմանալ, մեռած որգանիզմների փտումը, յերկրագնդիս վրա ապրող բոլոր կենդանի արարածների համար՝ ուղղակի անհրաժեշտությունն է:

Փտումն առաճանում է առանձին տեսակի աներեվուլթ եակների—միկրոբների շնորհիվ փտում. առաջ բերող միկրոբները կոչվում են նաև—նեխեցնող միկրոբներ: Նրանք շատ բազմաթիվ են և բազմազան (նկ. 5):

Նրանցից շատ կան հողի մեջ, ողում և ջրում, և յուրաքանչյուր մեռած որգանիզմ, լինի նա բույս, թե կենդանի, նրանց հարձակման յենթակա յե: Այնտեղ նըրանք առատ սնունդ են գտնում: Իսկ յեթե առատ սննդի հետ միասին, բավականաչափ բանակությամբ ջերմու-

թյուն և խոնավություն գտնվեց, այն ժամանակ մեր նեխեցնող միկրոբները կբազմանան անասելի արագությամբ: Մի քանի ժամից հետո նրանց քանակն արդեն անհաշիվ է դառնում:

Յեթե ձմեռը յերկար ժամանակ միսը թարմ է մընում, դրա պատճառն այն է, վոր միկրոբների զարգացման համար նպաստավոր պայմաններ չկան: Նեխեցնող միկրոբների բազմացման առաջնադեմ է ձմեռան ցուրտը:



Նկ. 5 Նեխեցնող բակտերիաներ

Նեխեցնող միկրոբների հրոսակախումբը շատ կարևոր գործ է կատարում ամբողջ բնության մեջ:

Վորպեսի լավ հասկանանք նրանց աշխատանքի նշանակությունը, միառժամանակ հանգիստ թողնենք նրանց և ուրիշ բանի մասին խոսենք:

Ամեն կենդանի արարած, վորպեսզի ապրի—պետք է սնունդ ստանա: Տեսնենք, թե ինչպես են սնվում կանաչ բույսերը, կենդանիները և մարդը:

Կանաչ բույսերը հողից ծծում են զանազան հյութեր իրենց արմատներով: Հողի հյութերը ջրի մեջ լուծված զանազան աղեր են: Բացի այդ՝ բույսերը սնունդ են վերցնում նաև ողից—կլանում են ածխածինը գազ: Թե հյութերից և թե ածխածինը գազից բույսերն առանձին նյութեր են պատրաստում: Գիտությունն այդ նյութերին ստիպակուցներ, ճարպեր և ածխաջրեր անունն է տվել: Ածխաջրերի խմբին են պատկանում ոսլան, շաքարը և ցելլուլոզը:

Այն, ինչ վոր բույսերը գետնից և ողից են վերցնում, այսինքն աղերն ու ածխաթթուն, գիտութիւնը նրանց անվանել է անորգանական նյութեր, վորպէսզի սպիտակուցներից, ճարպերից և ածխաշրերից տարբերվեն: Իսկ սպիտակուցները, ճարպերն ու ածխաշրերը կոչվում են որգանական նյութեր:

Ինչո՞ւ այդպիսի ընդհանուր անուն են տվել նրանց: Վարովհետև նրանք գոյանում են և գտնվում են կենդանի որգանիզմների և որգանների մեջ:

Սպիտակուցները, ճարպերը և ածխաշրերը, այսպես կոչված, որգանական նյութերը, խիստ անհրաժեշտ են կյանքի համար: Աշխարհիս յերեսին ապրող յուրաքանչյուր կենդանի արարածի աճումն ու կենսական գործունեութիւնը, ուղղակի թե անուղղակի ճանապարհով, անխմաստ կը դառնար առանց այդ որգանական նյութերի:

Կենդանական աշխարհը, նրանց թվում նաև մարդը, որգանական սննդարար նյութերն ստանում են բույսերից: Միայն կանաչ բույսերը կարող են հողի սննդարար հյութերից և ողի ածխաթթուից պատրաստել այն՝ ինչ վոր մենք անվանեցինք սպիտակուցներ, ածխաշրեր և ճարպեր:

Իսկապես, կենդանին, նաև մարդը գործածելով բուսական կերակուր, անհրաժեշտ որգանական նյութերն ստանում է անմիջապես բույսից: Գիշատիչներն ուտելով այդ կենդանիներին, որգանական սննդարար նյութեր ստանում են դարձյալ նույն բույսից: Որինակի համար վերցնենք գայլին: Գայլը պատուոտելով մի հորթ կամ մի գառ՝ վոչնչացնում է մի խոտակեր կենդանու, վորից նա ստանում է իր սննդի համար անհրաժեշտ որգանական նյութերը: Իսկ հորթը կամ վոչխարն որգանական նյութերն ստացել էյին, իրանց կենդանի ժամանակ, բույսերից:

Այսպես ուրեմն, դուք տեսնում եք, վոր բույսերն ամբողջ կենդանի աշխարհի համար սպիտակուցների, ածխաշրերի և ճարպերի միակ աղբյուրն են:

Այստեղից պարզ է, վոր կենդանի բնութիւն համար անհրաժեշտ է, վոր հողը մշտապես հարստանա զանազան աղերով, իսկ ողն՝ ածխաթթու գազով:

Վերադառնանք նորից մեր մանրագուշն աներևույթ եակներին: Մեռնող որգանիզմների քայքայման գործում մեծ աշխատանք է կատարում բազմազան մեկրոբների մի ամբողջ բազմութիւն: Հարձակվելով որգանական մնացորդների վրա, մեկրոբներն այնտեղ գտնում են իրանց համար հարմարագուշն սնունդ: Առատ սննդի հետ միասին, նաև վորոշ չափով ջերմութիւն և խոնավութիւն գտնելուց հետո, նրանք չափազանց արագ բազմանում են և վերջի վերջո որգանական մնացորդները քայքայում են իրենց բազադրիչ տարրերի:

Սպիտակուցների ամենակարևոր բաղադրիչ մասը բորակածինն է: Փտեցնող մեկրոբների նշանակութիւնը՝ մահու և կյանքի շրջանառութիւն մեջ, կայանում է նրանում, վոր նրանք նորից բորակածինը շրջանառութիւն մեջ են դնում բնութիւն մեջ, նրան դարձնելով նոր կյանքի աղբյուր: Սպիտակուցների քայքայումը կոչվում է փտումն:

Բույսը, կենդանին, նրանց հետ միասին և մարդն իրենց մեջ պարունակում են նաև ածխաշրեր և ճարպեր: Նրանք ել պետք է բաժանվեն իրանց բաղադրիչ մասերի: Յեվ, իսկապես, մենք տեսնում ենք, վոր այդպես ել լինում է: Որգանական մնացորդների քայքայման ժամանակ, սպիտակուցների հետ միասին քայքայվում են նաև ճարպերն ու ածխաշրերը:

Ածխաշրերի քայքայման ժամանակ նրանց միջից ազատվում է ածխաթթուն: Ածխաթթուն ել կյանքի համար

նույնքան անհրաժեշտ է, վորքան բորակածինը: Այստեղ արդեն կատարվում է այն՝ ինչ վոր կոչվում է խմորում:

Այսպես ուրեմն փտումն ու խմորումը բնության մեջ կատարվում են միաժամանակ: Մեռնող որգանիզմների քայքայումը, նաև կենդանիների միջից արտաթորված անպետք, դուրս արտաքսելի մեղր, կերակրի չը մարսված մնացորդները—կղկղանքը, բազմաթիվ և բազմատեսակ մեկրոբների մետ միասին, համերաշխ աշխատանք են կատարում բնության մեջ:

Յեթե ամեն մեռած որգանիզմ մնար չերկրիս վրա առանց փտելու և չը վերադառնար նորից հողի մեջ, մենք անխուսափելիորեն կորստի մատնված կլինեյինք:

Յեթե փտումն ու խմորումը չը լինեյին, բարդ որգանական նյութեր չեյին բաժանվի իրանց բաղադրիչ տարրերի, կանաչ բույսերը կը զրկվեյին իրենց անհրաժեշտ սննդի աղբյուրից և բնության մեջ կենդանիներն ել գոյություն չեյին ունենա: Կյանքը կը դադարեր:

Ինչպես տեսնում եք մանրագույն աներևույթ կենդանի էջակներն իրանց փոքրության համեմատ՝ շատ ավելի խոշոր աշխատանքներ են կատարում:


Հետևենք նրանց հետագա աշխատանքներին, բնության մեջ:

III.

Հողի սեղանաբար հասկուրյուններն ավելացնող բակտերիաները: Նրանց կենսական գործունեությունը: Պալաբայից բակտերիաներ: Նրանց նեոնակուրյունը: Բորակածից յուրացնող բակտերիաներ: Նրանց կյանքը յեվ աշխատանքը: Միկրոբների նեոնակուրյունը գյուղատնտեսության մեջ:

Ամեն կերակուր կենդանիները չեն կարող լավ յուրացնել, և վոչ ել ամեն բորակածնային միացում, վոր իբր սպիտակուցների քայքայման արգասիք՝ գտնվում է հողի մեջ, կարող է լավ յուրացվել կանաչ բույսերի կողմից: Իս-

կապես ասած, փտումների ժամանակ ստացված բորակածնային միացումները լավ չեն յուրացվում բույսերի կողմից: Նրանք լավ յուրացնում են միայն բորակածնային աղերը—սելիտրա (բորակ): Ահա, այդտեղ փտեցնող միկրոբներին շտապում են փոխարինել ուրիշ մանրագույն կենդանի էակներ: Այդ կենդանի էակները կոչվում են բորակացնող բակտերիաներ (նկ. 6):



Նկ. 6.-Բորակացնող բակտերիաների գանազան տեսակները 1000 անգամ մեծացրած:

Բորակացնող բակտերիաներ են կոչվում նրանք, վորովհետև նրանց կենսական գործունեությունը շնորհիվ հողի մեջ փտումից ստացված բորակածնային միացումները փոխվում են ուրիշ միացումների, այսպես կոչված—բորակի: Այս գործողությունը կոչվում է նիտրիֆիկացիա, լատիներեն նիտրում բառից, վոր նշանակում է բորակ:

Տեսնում եք, վոր այստեղ ել մանրագույն կենդանի էակների շնորհիվ հսկա աշխատանք է կատարվում: Հողը մշտապես հարստանում է բորակով, վոր կանաչ բույսերի սննդառության համար շատ անհրաժեշտ է, նրանց միջոցով ել անցնում է կենդանական աշխարհը:

Բացի հողի մեջ գտնված բորակածնից, վոր միշտ ուրիշ նյութերի հետ խառն է լինում, բնության մեջ գոյություն ունի, այսպես կոչված, ազատ բորակածնի մի հսկա պաշար—զի բորակածինը, վոր նրա 3/4 մասն է կազմում:

Բայց բանն այն է՝ վոր այդ ազատ բորակածինը չի կարող անմիջապես կանաչ բույսերի կողմից յուրացվել:

Յե՛վ ազատ բորակածնի ամբողջ հարստութիւնը զուր պիտի կորչեր, յեթե դարձյալ բնութիւն մեջ այդ աներևույթ բարեկամները չլինեցին:

Ամեն գյուղատնտես լավ գիտե, վոր վորունի, լոբու, վոսպի, առվույտի և ուրիշ լոբազգի բույսերի արմատների վրա կան առանձին ուռուցներ կամ ինչպես նրանց անվանում են—պալարներ:

Յերկար ժամանակ այդ պալարների վրա նայում ելին վորպես բույսերի հիվանդութիւն վրա: Մոտ քառասուն տարի մեզանից առաջ գիտնականներին հաջողվեց ապացուցել, վոր այդ պալարներն առանձին տեսակի բակտերիաների բնակարաններն են: Այդ բակտերիաները կարող են ողի ազատ բորակածինը յուրարացնել: Պալարային բակտերիաները հողի միջից են ընկնում արմատների վրա: Արմատի կեղևի տակ նրանք չափազանց բազմանում են և կազմում պալարներ: Այն բորակածինը,



Նկ. 7. Առվույտի արմատը պալարներով: ա. պալարը բնական մեծութիւնը բ. արմատի վերկարությամբ հասածը գ. պալարային բակտերիաներ:

վոր այդ բակտերիաներն ողից վորսում են, ծախսվում և սպիտակուցներ պատրաստելու վրա, վոր բակտերիաների

պահանջներին գոհացում տալուց հետո, ծառայում և նաև այն բույսի պետքերի համար, վորի մեջ բակտերիաները բուն են դրել (նկ. 7.):


Ավելի ուշ գիտնական Վինագրադսկին գտավ ազատ բորակածին վորսացող ուրիշ բակտերիաներ: Վինագրադսկու գտած բորակածին յուրացնող բակտերիաներն, առաջիններին հակառակ, ազատ կյանք են վարում: Նրանք գտնվում են հողի մեջ: Ողի ազատ բորակածինը վորսայով նրանք իրանց համար սպիտակուցներ են պատրաստում, իսկ մեռնելուց հետո հողը հարստացնում են խառը բորակածնով:

Հազիվ մի փոքր աչքի անցկացրինք աներևույթ եակներին աշխարհը և արդեն մեր առաջ բացվեց միկրոբների անընդգրկելի նշանակութունն ամբողջ աշխարհի համար, և մասնավորապես ամեն մի հողագործի համար: Հողի պարտացման խնդրում միկրոբների նշանակութունն ակներև է: Առանց նրանց անտեսանելի ոգնութիւն՝ գյուղատնտեսի բոլոր աշխատանքներն իզուր պիտի կորչեցին: Իսկ իր կողքին ունենալով այդ աներևույթ, բայց չափազանց գործունյա բարեկամներին և գիտակցաբար նրանցից ոգտրվելով, հողագործը կարող է նրանց կենսական գործունեութիւնն ուժեղացնել և նրանցից ավելի ոգուտներ բաղել: Որինակ, հողի խնամքով մշակումը կբարձրացնի արտի բերքը: Հողի փխրունութունը նրան ընդունակ կը դարձնի ավելի ոգ ներմուծելու և դրանով բորակածին յուրացնող բակտերիաների աշխատանքն ավելի արդյունավետ կդարձնի: Բացի այն՝ վոր փխրուն հողի մեջ մեծ քանակութիւնով ոգ կմտնի, փխրուն հողը ապահովում է նաև մեծ քանակութիւնով խոնավութիւն, վոր շատ անհրաժեշտ է վո՛չ միայն ազատ բորակածին յուրացնող բակտերիաների, այլ և հողը բորակացնող բակտերիաների և մեզ համար ուրիշ շատ ոգտակար մասնիկների համար:

Շատ պարզ է նաև լոբազգի և այլ բույսերի հաջոր-

զական ցանքսի նշանակութիւնը: Լորագգի բույսերը, առփուլար, փոլոնը, լոբին և այլն, հողն ուժասպառ չեն անում, ընդհակառակը, նրանք ավելի հարստացնում են բորակածնով: Լորագգի բույսերն իրանց աճման ընթացքում հողից չեն վերցնում խառն բորակածնի պաշարը, փորովհետև բակտերիաների ոգնութիւնը ուղից վերցնում են ազատ բորակածին, այդ պատճառով ել նրանցից հետո ցանված բույսերն, անկասկած, ավելի լավ բերք կտան:

Շատ վաղ ժամանակներից մարդիկ հողը պարարտացնելու համար ոգտվել են կանաչ բույսերից: Ուժասպառ յեղած և բորակածնից աղքատացած հողի վրա ցանում են մի փոքր լոբագգի բույս, սովորաբար առփուլար: Ծաղկելուց հետո ցանքը վարում են, այս կերպ բույսերը հողի տակ թաղելով, նորից նրան վերադարձնում են իր խառն բորակածինը:



Նկ. 8. Բորակածին յուրացնող բակտերիաներ 1000 անգամ մեծացրած:

Ինչպես ամենքը փորձից գիտեն, պարարտացնելու համար թարմ աղը չեն գործածում: Աղբի մեջ գտնված առատ որգանական մնացորդները պետք է փոխվեն բույսերին հարմար միացումների, փորպեսգի հնարավոր լինի նրանցից ոգտվել: Այդ գործի համար աղբակույտերի մեջ աշխատում են բազմաթիվ և բազմազան մեկրոօրններ: Վորպեսգի նրանց գործունեությունն ավելի արդյունավետ

լինի, պետք է աղբի վրա վորոշ խնամք տանել: Ընդհանրապես անհրաժեշտ է աղբակույտերի համար յերկու պայման: Աղբակույտը պետք է թաց պահել և վորոշ աստիճանի խտացրած: Սոնավութիւնն ու խտութիւնը արգելք են լինում ողի հոսանք ներս մտնելուն, վոր մեկրոօրնների համար հարկավոր չէ, և այդ բանը նպաստում է նրանց աղբը «մարտելուն»: Իսկ խոնավութիւնն արգելք է հանդիսանում աղբի չափազանց տաքանալուն:

IV

Խմորումն: Սպիրտի խմորումն պասնառների գլուխը: Պաստուր: Գրոծծներ: Մեկրոօրների գուս կուլուրա: Նրանց նշանակութիւնն արգոււնաբերութիւնների մեջ: Բացախարքվային բակտերիաների գործունեութիւնը: Կարնաքքվային բակտերիաներ: Նրանց նշանակութիւնը կարնային մթերներ պատրաստելու գործում: Սիլոս: Բակտերիաների նշանակութիւնը վուսը բերչոց զնելու ժամանակ:

1002  
9821

ել ինչ ոգուտ է ստանում մարդն աներևութ կենդանի եակների աշխարհից:


Մենք արդեն վերևում ասացիք, վոր բնութիւնն մեջ փտման հետ միաժամանակ կատարվում է որգանական նյութերի խմորումն: Փտման ժամանակ բաշքայվում են սպիրտակուցները, իսկ խմորման ժամանակ—ածխաշրերը վորոնք են շաքար, ուլա, ցիլլուլոզ:

Շատ հին ժամանակներից մարդը գիտեր զինի պատրաստել: Միայն մի քանի տասնյակ տարի առաջ նշանավոր գիտնական Պաստերը գտավ սպիրտի խմորման պատճառը: Նա առանց տատանվելու ապացուցեց, վոր սպիրտի խմորումն առաջ է գալիս առանձին մեկրոօրգանիզմների—սոււնկերի գործունեութիւնն հետևանքով: Այդ սոււնկերը կոչվում են դրոժժներ:

Դրոժժները, ինչպես նաև մյուս բոլոր մեկրոօրգանիզմները կարող են զարգանալ միմիայն վորոշ միջա-

վայրուժ և վորոշ պայմաններում: Դրոժժները կարող են ապրել բոլորովին առանց թթվածնի, թեպետ ոգի ներկայությունն ուժեղացնում է նրանց կենսունակությունը:

Սպիրտի խմորման զարգացման համար, ամենահարմար պայմանը շաքարն է: Բավականաչափ ջերմության հետ, յեթե դրոժժներն ընկնում են շաքարի մեջ, սկսում են չափազանց արագ բազմանալ: Նրանք ընդունակ են իրանց մեջ պատրաստելու մի առանձին նյութ — գիմազ, վորի ներկայությամբ շաքարը քայքայման է չենթարկվում: Շաքարը բաժանվում է սպիրտի և ածխաթթուի: Սպիրտը մնում է, իսկ ածխաթթուն տարածվում է ոգի մեջ, իսկ այնտեղից էլ կանաչ բույսերն են վորսում:



Նկ. 9 Չանազան դրոժժներ 1000 անգամ մեծացրած.


Գիտությունը հարստացնում է ժարդուն: Գիտությունը ոգնում է մեքենայագիտությանը: Արդյունաբերական զանազան նպատակների համար այժմ գործ են ածում միկրոօրգանիզմի գուլա մշակույթ: Գինեգործության և գարեջրագործության մեջ ոգավում են վորոշ տեսակի դրոժժների գուլա մշակույթների խմորացումն առաջացնելու ընդունակությունից: Դրոժժների զանազան տեսակները զանազան համ են տալիս գինուն և գարեջրին:

Գինուց հետո, մարդու համար պակաս կարևոր մրթերք չէ քացախը: Քացախն էլ ստացվում է բակտե-

րիաների կենսագործունեությունից: Նորհիվ, վորոնք քացախաթթվալին խմորումն են առաջ բերում: Քացախաթթվալին խմորման զարգացման միջավայր կարող է լինել սպիրտ պարունակող վորևե հեղուկ:

Սպիրտ պարունակող հեղուկը միաժամանակ բաց պահելիս, շուտով նրա մեջ չերևան է գալիս մի գորշագույն փառ: Այդ փառը վոշ այլ ինչ է, յեթե վոր քացախի բակտերիաների կուտակումը:

Մեր ժամանակներում քացախ ստանում են գործարանային միջոցներով: Զանազան համի քացախ ստանալու համար, գործ են ածում զանազան տեսակի մերան



Նկ. 10 Քացախի բակտերիաներ 1000 անգամ մեծ.

(խմոր) կամ զանազան տեսակի քացախային բակտերիաներ: Խմորը, կամ ինչպես այլ կերպ անվանում են «քացախի մերանը», վոշ այլ ինչ է, յեթե վոշ քացախաթթվի խմորման բակտերիաների կուտակումն: Այսպես ուրեմն, մեր գործածական քացախն առանձին բակտերիաների աշխատանքի արդյունքն է:

Գնանք առաջ: Բնության մեջ ամենատարածվածը կաթնաթթվալին բակտերիաներն են: Նրանք շատ բազմազան են, նրանց կենսագործունեությունն էլ բազմազան է: Կաթնաթթվալին բակտերիաների շնորհիվ է, վոր ստանում ենք կաթնեղեն այնպիսի մթերքներ, վորպիսիք են մածուն, արածան, սեր, կարագ և զանազան պա-

նիրններ: Կաթնաթթվային բակտերիաների առանձին տեսակները պանրին, կարագին կամ մածնիւ տալիս են այս կամ այն համր: Կաթնաթթվային բակտերիաների առանձին տեսակների գուտ մշակույթներ այժմ գործադրում են մինչև անգամ առանձին տնտեսութունների մեջ: Չխոսենք արդեն այն գործարանների մասին, վորտեղ պատրաստում են զանազան տեսակ կաթնամթերքներ:



Նկ. 11 Կաթը թթվացնող բակտերիաներ— 1000 անգամ մեծ

Թթու կաղամբ, աղը դրած վարունգ կամ թթխմոր պատրաստելու հաջողութունն էլ կախված է կաթնաթթվային բակտերիաների աշխատանքից:

Նրանց գործակցութունը դրոժժների հետ մեզ հնարավորութուն է տալիս կեֆիր, կուլմիս և մեզ հանրածոթ կվասո խմիչքները պատրաստելու:

Բավական մեծ նշանակութուն ունի, գյուղատնտեսության մեջ, սիլոսի պատրաստումը— անասունների համար խմորած կեր: Սիլոս պատրաստելու համար կանաչ կերը պինդ լեցնում են մի փոսի մեջ, վերևից ծածկում են հողով և մամուլով սեղմում: Կերն սկսում է խմորվել: Խմորուսն առաջ է գալիս զանազան տեսակ միկրոբների մասնակցությամբ, բայց գլխավորապես կաթնաթթվային բակտերիաների: Սիլոսը սննդարար կերակուր է և անասունները մեծ հաճույքով են ուտում:

Բնության մեջ գոյութուն ունենալ առանձին միկրոբներ, վորոնք այնպիսի խմորումն են առաջ բերում, վորի ժամանակ առաջ է գալիս այն նյութի քայքայումը, վոր բույսի առանձին բջիջներն իրար հետ միացնում է: Այդ նյութը կոչվում է պեկտին, իսկ խմորումը՝ պեկտինյան խմորում: Դյուրատնտեսության մեջ այդպիսի խմորում առաջ է գալիս վուշը թրջոց դնելիս: Վուշի թելերը միացնող պեկտինյան նյութը քայքայվում է և վուշի թե-

ղերն ազատվում են: Վուշը թրջոց դնելիս գյուղական տնտեսութունների մեջ հաճախ անախորժ դեպքեր են պատահում: Պեկտինյան խմորման բակտերիաների կողքին կարող են ազատ կերպով ընկնել ուրիշ բակտերիաներ և զարգանալ, որինակ, այնպիսիներ, վորոնք հենց վուշի թելերի մեջ են խմորումն առաջ բերում: Այն ժամանակ վուշը փշանում է: Այժմ արդեն կարողանում են գուտ պեկտինյան խմորումն առաջացնող մշակույթներ պատրաստել և միայն հարկավոր է ցանկանալ, վորպեսզի նրա գործածութունն արագ կերպով տարածվի մեզ մոտ, տնայնագործական ճանապարհով վուշ մշակելու համար:



Նկ. 12 Վուշի թելիկ քայքայող միկրոբները

Ահա ձեր առաջ մի վորևե ծառի տերևի ժայռակ: Դուք նրան վերցրել եք գետնից ու շաշանը: Նրա փափուկ, հյութալի բույր մասերն արդեն բալբալվել են, մնացել է միայն նրա «նյարդ»-երի նուրբ ժանյակը: Դրանք տերևի անոթներն են, վորոնք կազմված են ցելլուլոզից: Ցելլուլոզը շատ դժվարացել է, բայց վերջի վերջո նա չել է քայքայվում: Բանից գուրս է գալիս, վոր այդտեղ էլ աներևութ եակներն են աշխատում: Այդ բանը գտավ գիտնական Սմեյանսկին: Այդ միկրոբներն առաջ են բերում ցելլուլոզի խմորումն:

Մենք ծանոթացանք փտեցնող, բորակացնող, բորակածին չուրացնող և զանազան խմորումներ առաջացնող մի շարք միկրոբների աշխատանքների հետ: Դրանով դեռ շատ հեռու յենք մանրագույն եակների անընդգրկելի աշխարհն ամբողջովին սպառելուց: Դուք ար-

դեն տեսաք, վոր նրանց աշխարհն, իսկապես, հոյակապ է:

Մենք շրջապատված ենք՝ իրենց գործը հմտորեն կատարող աներևույթ մասնագետներով, վորոնց դեռևս մենք փոխարինել անկարող ենք, չը նայելով մեր ունեցած խելքին ու գիտությանը:

V.

Մարդու բեճամիները միկրոբների աշխարհում: Հիվանդաբեր միկրոբներ: Պաստորի գլուխ: Մարդու լեզ կենդանիների մեջ հիվանդաբեր միկրոբների մեծելու ուղիները: Հիվանդաբեր միկրոբների բույները: Պաշտպանության գեճները որգանքով մեջ: Բնածին լեզ ստացական անհարբերությունը գեպի հիվանդությունները: Նախապաշտպանողական պաշտպան: Պաշտպան հիվանդության ժամանակ: Պայքար հիվանդաբեր միկրոբների դեմ:

Մինչևի պիտի մենք խոսեցինք միայն ա՛յն աներևույթ եակների մասին, վորոնց կարող ենք մեր գործունյա բարեկամները համարել: Բայց գոյություն ունեն նույնպես այնպիսի միկրոբներ, վորոնք շատ վնաս են հասցնում մարդուն:

Յեթե գինի և գարեջուր պատրաստելիս, սև կամ սպիտակ հաց թխելիս, քացախ, կարագ, պանիր, թթու կաշամբ, աղը դրած վարունգ, կվաս, կուսիս, կեֆիր, ծխախոտ, թեյ, կակաո և կոֆե պատրաստելիս՝ մենք ոգտվում ենք բազմաթիվ աներևույթ եակներից կամ նրանց ենք պարտական այդ և ուրիշ շատ մթերքների ստանալը բայց դրա փոխարեն այդ նույն անտեսանելի եակների չեղբայրակիցներից շատերը հենց այստեղ և եթ, շատ վնասներ են տալիս մեզ:

Կաթի և պանրի շատ պակասությունները, լուզի գառնանալը, գինու և գարեջրի հիվանդությունները, մրգերի և պտուղների փչանալը, շաքարի արտադրություն ժամանակ նրա փչանալը, վուշի թելի փչանալը, հացի

փչանալը և ուրիշ շատ վնասներ, վոր մարդս կրում է, համենայն դեպս նույն մեզ համար անտեսանելի եակների գործն է:

Իսկ ամենամեծ վնաս մարդն ստանում հիվանդաբեր միկրոբներից: Հիվանդաբեր միկրոպները մտնելով հենց մարդու որգանիցմը կամ նրան ոգտակար կենդանիների մեջ, առաջ են բերում զանազան հիվանդություններ, հաճախ մահաբեր:

Մարդկային անբուժանելի համաճարակներ, վոր ամեն ժամանակ բազմաթիվ անզամ պատահում են զանազան բաղադրներում, յերկրներում ու տեղերում, իրենց անբացատրելիության և սպառնականության պատճառով համարվել են աստծուց ուղարկված պատիժ կամ դժոխքի շար վոգիների գործ:



Նկ. 13

Մեծ գիտնական Պաստերը սրանից 50 տարի առաջ մեր առաջ բաց արեց այդ գաղտնիքը: Նա ապացուցեց, վոր հիվանդություններն առաջանում են միկրոբներից և վոր «հիվանդությունների դեմ պայքարելը, այդ հիվանդություններն առաջացնող միկրոբաբույրիցների դեմ պայքարել ասել է»: Իս ամենամեծ հայտնագործությունն էր ավերող մարդկության համար: Դժբաղդաբար Պաստերի

այդ գյուտը, հիվանդութիւնները պատճառների մասին, դեռ ևս մեր ժամանակներումն էլ ժողովրդական մասսա- չի գիտակցութեան մեջ չի մտել:

Հիվանդաբեր միկրոբների մարդու և մյուս կենդանի- ների որգանիզմի մեջ մտնելու ճանապարհները բազմաթիվ են:

Մարմնի վրա առաջացած մի շանգուված կամ վերք՝ նրանց համար դուռ է ներս մտնելու համար: Քթի, բե- րանի, աղիքների, թոքերի, միզասեռային անցքերով նը- րանք մտնում են իրանց գոհի մեջ:

Մարդու կամ կենդանու որգանիզմի մեջ բնակվելով, միկրոբները սկսում են կերակրվել նրանց հաշվին: Յեթե միկրոբները կերակրվում են՝ նրանց կենսագործութիւնից պետք է դուրս արտաթորելի նյութեր գոյանան: Հիվան- դաբեր միկրոբներն իրանց այդ նյութերն արտաթորում են այն եակի որգանիզմի մեջ՝ վորի վրա վոր հարձակում են գործել:

Կենդանիների աղբը և հենց մարդու աղբը թափում են հատուկ փորած փոսերի մեջ: Ահա հիվանդաբեր միկ- րոբներն էլ այդպիսի աղբափոսեր են պատրաստում ի- րանց գոհի որգանիզմի մեջ, բնակվում են այնտեղ և ա- մեն արտաթորութիւն, ինչ վոր արդեն իրանց համար պետք չի, թափում են արյան մեջ: Հիվանդաբեր միկ- րոբների այդ աղբերը թունավորում են մարդուն և կեն- դանիներին, վորի հետևանքը լինում է հիվանդութիւն:

Բայց ինչու ամեն հիվանդութիւն մահաբեր չէ: Մեկ պատճառն այն է, վոր ինքը, հիվանդաբեր միկրոբներով վարակված մարդու որգանիզմը կամ կենդանու որգանիզ- մը, սկսում է հիվանդաբեր միկրոբների թուլնի դեմ հա- կաթուշն պատրաստել:

Ձանազան անսակ հիվանդաբեր միկրոբների պատ- րաստած թուլններն էլ պանազան են լինում: Թուլների ազդեցութիւնն էլ տարբեր է լինում նրանց գոհի վրա:

Այստեղից էլ յեզրակացնում ենք, վոր հիվանդաբեր միկ- րոբների առաջացրած հիվանդութիւններն էլ բազմատե- սակ են: Յեթե միկրոբների թուլները տարբեր են, ապա նրանց հակաթուլներն էլ տարբեր պետք է լինեն: Յեթե միկրոբներով վարակված որգանիզմը պատրաստում է բա- վականաչափ հակաթուլն, այն ժամանակ միկրոբների վնասաբեր ազդեցութիւնը վոչնչանում է: Հարձակման լենթարկված որգանիզմը կամ բոլորովին չի հիվանդա- նում, կամ հիվանդութիւնն է հաղթահարում, կամ սկսում է առողջանալ: Յեթե արտադրած թուլնի քանակն ավելի յե քան հակաթուլնինը, այն ժամանակ մահն անխուսա- փելի յէ:

Հիվանդացած որգանիզմի հաղթանակելու դեպքում, նրա մեջ դեռ վորոշ ժամանակ շարունակում է հակա- թուլն պատրաստվել, վորը որգանիզմի մեջ մնում է, կարծես, թե անգործ:

Իեռ շատ հեռու ժամանակներում, Պաստերի գյու- տից էլ շատ տարիներ առաջ, նկատված էր հետեւյալը. յեթե մարդը հիվանդանում էր վորոշ հիվանդութիւննե- րով, որինակ՝ ծաղիկով, ժանտախտով և մի քանի ուրիշ հիվանդութիւններով, առողջանալուց հետո նա մի տեսակ ապահովված էր յերկրորդ անգամ նույն հիվանդութիւ- նով հիվանդանալուց: Մարդը դառնում էր արդեն ան- տարբեր դեպի այդ հիվանդութիւնները:

Այն, ինչ վոր մարդիկ միայն դիտում էին առանց հանելուկը վճռելու, մեր որերում՝ շնորհիվ մարդկային խելքի նվաճումներին և շնորհիվ գիտութեան հայտնա- գործումներին, բոլորովին հասկանալի դարձավ: Մարդու ձեռք բերած անտարբերութիւն մի քանի հիվանդութիւն- ներից կրկին չհիվանդանալու վերաբերմամբ, ինչպես ո- րինակ, ժանտախտի, ծաղիկի, բացատրվում է նրանով, վոր առողջացած որգանիզմի մեջ դեռ յերկար ժամանակ պահպանվում է հակաթուլնը: Հակաթուլնը պատրաստ է

ամեն րոպե կովելու ան թուլնի դեմ, վոր կարող ե նորից ընկնել նրա մեջ:

Չեռք բերված տնտարբերության հակառակ՝ շատ մարդիկ կամ կենդանիներ նկատված են, իբրև, այսպես ասած բնածին անտարբերներ: Հիվանդաբեր միկրոբների արտաթորությունները— թուլները չեն թունավորում այդ որդանիզմները, թեև նրանց մեջ չեն պատրաստված հարկավոր հակաթուլներ: Սակայն ի ծնե անտարբերությունն ել կարող ե խախտվել, վոր առաջ ե գալիս որդանիզմի թուլանալուց: Որդանիզմի թուլանալը կարող ե առաջ գալ զանազան պատճառներից, կամ հենց նոր անցակացրած ուժեղ հիվանդությունից, յերկարատև քաղցից, չափազանց հոգնածությունից, ամենորյա աշխատանքի ապրուստի մշտական վատ պայմաններից:

Չի կարելի արդյոք, արհեստական կերպով մարդու կամ կենդանիների որդանիզմն անտարբեր դարձնել հիվանդաբեր միկրոբների արտադրած թուլների դիմաց:

Գիտությունը հնարել ե արհեստական միջոցներ, մի քանի վարակիչ հիվանդություններից ազատ մնալու: Այդ միջոցներն են—նախազգուշացուցիչ պատվաստները: Ինչ ձևով են պատրաստում այդ պատվաստները մենք այս գրքում այդ մասին չենք խոսելու, միայն կասենք, թե ինչու մն ե կայանում նրանց ելությունը: Ելությունն այն ե, վոր նախազգուշացուցիչ պատվաստներով մարդիկ կամ մյուս կենդանիներն արհեստական կերպով թուլը վարակվում են այն հիվանդությամբ, վորից ուզում են որդանիզմն ապահովագրած լինել: Վերցնենք թեկուզ մեզ ամենքիս լավ ծանոթ ծաղկի պատվաստը: Ծաղկի պատվաստով մարդն արհեստականորեն թուլը կերպով վարակվում ե: Այդ թուլը ծաղկի հիվանդության հետ որդանիզմը կովելիս, նրա արյան մեջ գոյացած հակաթուլը նրան ապահովում ե իսկական ծաղկով վարակվելու վտանգից:

Պատվաստ կատարում են վոչ միայն մինչև հիվանդանալը, այլ և հիվանդության ժամանակ: Վերցնենք դիֆտերիտի հիվանդությունը: Անհրաժեշտ ե, վոր պատվաստը կատարվի ժամանակին: Այստեղ որդանիզմի մեջ սրսկում են դիֆտերիտի բացիլների պատրաստած թուլնի դեմ ձեռք բերած հակաթուլը: Դիֆտերիտի ձողիկների թուլը շատ ուժեղ ե: Յեթե դիֆտերիտի շիջուկի պատվաստն ուշանում ե, հիվանդի որդանիզմում կարող ե հավաքվել աչնպիսի քանակությամբ թուլն, վոր սրսկված հակաթուլնն արդեն անբավարար գտնվի թուլնի դեմ կրովելու համար: Հիվանդը մեռնում ե:

Յեթե առաջ դիֆտերիտից մեռնում ելին հիվանդացածների կեսից ավելին, այժմ «դիֆտերիտի շիջուկ»-ի գործածության շնորհիվ, համարյա, մահացության թիվը չնչին ե:

Դժբաղդաբար պատվաստները մինչև հիմա, շատ հաճախ թե քաղաքի և թե գյուղի մասսայի մեջ սնտիապաշտական չերկյուղ են առաջ բերում և նրանք չեն ցանկանում պատվաստ կատարել: Այն ինչ՝ ժամանակին արված պատվաստը կարող ե շատ մարդկանց կյանքը պաշտպանել, իսկ ժամանակին անասունների համաճարակի առաջն առնելը կարող ե հաճախ գյուղական տնտեսությունները փրկել բոլորովին քայքայվելուց:



Նկ. 14 ա.—Միբերական ախտի բացիլները և նրանց խժող բջիջները: Բ.—Միբերական ախտի բացիլները խժողների մեջ:

Մեր և ուրիշ կենդանիների մարմնի մեջ պայքարի մի ուրիշ զենք ել կա: Դրանք առանձին շարժուն բջիջներ են, վորոնք հարձակվում են որդանիզմի մեջ մտած հիվանդաբեր միկրոբների վրա, նրանց բռնում են և ուտում (նկ. 14): Հիվանդաբեր միկրոբներին խժոելու գոր-

ծում մեծ դեր են խաղում արյան բաղադրութեան մեջ գտնված, այսպես կոչված սպիտակ գնդիկները:

Ինչպես տեսնում ենք, մեր որգանիզմն անպաշտպան է այդ ամենափոքր, բայց բազմաթիվ ու բազմազան թրշնամիների հանդեպ: Նրան ոգնութեան է գալիս գիտութունն իր գլուտերով—բժշկութեան մեջ:

Ուսումնասիրելով միկրոբների կյանքը, նրանց կենսագործունեությունը և այն պայմանները, վորտեղ նրանց կենսագործությունն ընթանում է ամենահաջողկերպով, գիտությունը հնարում է նրանց դեմ պայքարելու հնարավոր ձևեր նաև որգանիզմից դուրս:

Հիվանդաբեր միկրոբների դեմ յերկու միջոց կա կրավելու, մեկ միջոցն այն է՝ վորով կարելի չէ սպանել հիվանդաբեր եակներին և մյուս միջոցով նվազիցնել նրանց բազմացումը, ստեղծելով նրանց համար անբարենպաստ պայմաններ:

Մենք կանգ չենք առնի այդ բոլոր միջոցների վրա: Միայն մի քանի խոսք կասենք այն միջոցների մասին, վորոնք մեզանից ամեն մեկն էլ պարտավոր է գործադրել ընդհանուր բարեկեցութեան համար:

Ամենից առաջ մեր բոլորի պարտականությունն է մեր բակերն ու բնակարանները մաքուր պահել և բնակարանների ողբ հաճախ փոխել: Փորատիֆի և խոլերայի մասսայական տարածության դեպքում պետք է զգուշ լինել կերակուրներ ընդունելիս: Այդ հիվանդությունները հեշտությունից տարածվում են խմելու ջրի, կերակուրի, բանջարեղենների, պտուղների և մրգերի միջոցով: Այդ պատճառով հիշած հիվանդությունների ժամանակ չի կարելի հում ջուր խմել, հում բանջարեղեն և միրգ ուտել: Բոլոր կերակուրները պետք է լավ չեփած կամ տապակած լինեն: Այդ տեսակ վարակիչ հիվանդություններով բռնվածներին խնամելիս ուշադրություն դարձրեք հիվանդի և ձեր մաքրություն վրա: Մաքրեցեք այն բնակարանը, վորտեղ

հիվանդն է գտնվում: Հիվանդի կերած կերակրի մնացորդը շուտեք կամ նրա խմած ջրից չը խմեք: Զանազան հիվանդություններ հիվանդից առողջներին են անցնում զանազան ճանապարհներով: Խոլերան և տիֆը մեկից-մյուսին անցնում են կղկղանքի և փխսածի միջոցով, վորոնց մեջ բազմաթիվ հիվանդաբեր միկրոբներ կան: Ուրիշ հիվանդություններ, ինչպես տուբերկյուլոզն է կամ պալարախտը, վոր աչքանլայն չափով տարածված է հասարակությունների մեջ, տարածվում է հիվանդի խուլի միջոցով, չերբ հիվանդը հագում է և թքում, իսկ թքի չորանալուց հետո բացիլները փոշու հետ բարձրանում են ողի մեջ: Հազից և խխելուց հեշտությունից կարելի չէ վարակվել նաև այնքան տարածված և սովորական դարձած—ինֆլուենցա հիվանդությունից (նկ. 13.):

Հիվանդաբեր միկրոբներից մի քանիսն աննպաստ պայմանների մեջ ընկնելով, շուտով վոչնչանում են: Ուրիշները, ինչպես որինակ սիբիրյան ախտը, տուբերկյուլոզը կարող են յերկար ժամանակ իրանց կենսունակությունը պահել: Նրանք իրանցից արտադրում են մի նյութ, վորով իրանց մարմինը պատում են մի առանձին թաղանթով և այդպիսով կաշուն վիճակ ստեղծում իրանց սպորների համար: Այս վիճակում նրանք անվնաս կարող են մնալ ամենախիստ չերաշտների ժամանակ: Հիվանդաբեր միկրոբները չորացած կամ սպորների ձևով հեշտությունից տեղից-տեղ են փոխվում ողի միջոցով և ընկնում հողի կամ ջրի մեջ: Նորից բարենպաստ պայմանների մեջ ընկնելով սպորների թաղանթը պատվում է և այդ չորացած թշնամիները նորից սկսում են իրանց կենսագործունեությունը: Հիվանդաբեր միկրոբների զարգացման լավագույն միջավայրը մարդն է և մյուս կենդանիները: Այնտեղ են նրանք իրանց կենսագործունեությունն ամենաեռանդուն կերպով կատարում:

VI

Վորե՞ղ է քագնված միկրոբների ուժը: Նրանց բազմա-  
նալու առաջուքուցը: Նրանց հարմարվելու մեծ ընդունակու-  
թյունը: Նրանց զարգացման լավագույն պայմանները:

Միկրոբների ուսումնասիրությունը զբաղվող յերիտա-  
սարդ գիտությունը դեռ ևս չի կարողացել ամբողջ այդ  
աներեվույթ աշխարհը նվաճել: Բայց արդեն բաց է արել  
նրա մեծ նշանակությունն ամբողջ բնություն և մարդու  
նկատմամբ:

Յերբեմն տեսնում ենք միկրոբներին հողագործի և  
արդյունագործության բարեկամ, յերբեմն նրանց թշնամի:  
Մերթ նա բարեկամ է մարդուն իր առուրչա կյանքում,  
մերթ նրա անհրաժեշտ մթերքների թշնամի և վնասատու,  
մերթ նյութի և կյանքի շրջանառություն կատարող, մերթ  
մահաբեր:

Միայն ոգի բարձր շերտերում, բաց ովկիանոսի վրա  
և բարձր ձյունապատ լեռների գագաթներին չկան միկ-  
րոբների գոյություն հետքեր, յեթե վոչ ամեն տեղ, տիե-  
զերքի բոլոր անկյուններում գտնում ենք այդ «հերոս-  
ներին»:

Ինչո՞ւն է նրանց ուժը:—Նրանց չափազանց արագ  
բազմացման մեջ: Վոչ մի կենդանի արարած այնքան արագ  
չի բազմանում, ինչպես այդ «մանր» եակները: Ահա թե ինչ  
է ասում մի գիտնական նրանց բազմացման արագություն  
մասին:

«Բավական է նեղություն քաշք մի փոքրիկ հաշիվ  
անելու, վոր համոզվեք, թե վորպիսի աներևակայելի բազ-  
մությունը են աճում նրանք բարեհաջող պայմաններում:  
Յենթազրեք, վոր յուրաքանչյուր բակտերիա մի ժամվա  
մեջ բաժանվում է յերկուսի, մի նոր ժամից հետո յեր  
կուսը դառնում է չորս, յերեք ժամից հետո՝ ութը և այլն:  
24 ժամվա մեջ բակտերիաների թիվը կը հասնի արդեն  
16<sup>3/4</sup> միլիոնի (16,777,200). յերկու որից հետո նրանց

թիվը կը հասնի անհավատալի քանակի—28<sup>1/2</sup> բիլիոնի,  
իսկ յերեք որից հետո մինչև 4,779 արբիլիոնի»:

Այսպիսով նրանք կարող են ամբողջ տիեզերքը լեց-  
նել: Բայց բնությունն՝ ինքը հավասարակշռություն է պա-  
հում բակտերիաների և մյուս կենդանի եակների թվի  
մեջ: Կենդանի որգանիզմների մեջ մղվող հավիտենական  
գոյամարտում անհամար թվով գոհ են գնում մեր փոք-  
րագույն բարեկամներից ու թշնամիներից և հնարավո-  
րություն չի տրվում ամբողջ աշխարհը լցնելու: Բայց այ-  
նուամենայնիվ այդ կովի մեջ դարձյալ անհամար թվով  
բակտերիաներ հաղթող են դուրս գալիս և իրանց գործը  
կատարում են ընդհանուր բնության կյանքում:

Նրանք վորքան մեծությունը փոքր են, այնքան էլ քչով  
բավականացող են: Նրանցից շատերն ուղի կարիք չեն ըզ-  
գում: Արևի լույսը սպանում է նրանց, շատերը վոչնչա-  
նում են ուղի թթվածի ներկայությունից: Բայց նրանց  
գոյություն համար անհրաժեշտ է վորոշ քանակությունը  
խոնավություն: Միկրոբներից մի բանիսը, ճիշտ է, հար-  
մարվում են ուժեղ յերաշտին, բայց համենայն դեպս ա-  
ռանց խոնավության նրանց կյանքն անդառնալի կորստի  
կը մատնվի: Միկրոբների յուրաքանչյուր տեսակի զար-  
գացման ու կենսագործունեություն համար անհրաժեշտ  
է նաև վորոշ քանակի ջերմություն և հարկավոր սննդի  
վորոշ միջավայր: Ինչպես տեսանք նրանց կենսագործու-  
նեություն արդյունքը լինում է վորոշ աշխատանք:

Շատերի համար կարող է հեքիաթ թվալ այդ անե-  
րևույթ եակների աշխարհը: Բայց մարդու այս աներե-  
վույթ բարեկամների և թշնամիների գոյությունը հաս-  
տատված է բազմաթիվ գիտնականների կողմից: Մանրե-  
ների աշխարհի հետագա ուսումնասիրությունն ու դի-  
տողությունը ժամանակին բաց կանի նրանց ավելի խո-  
շոր նշանակությունը բնության կյանքում:



« Ազգային գրադարան



NL0263470

Հ. Ա. Խ. Հ. ՊԵՏՅՐԱՏ

«ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՍԵՐԻԱՅԻՑ» ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Գաբրիելան Ռ.—Միջատակեր բույսեր . . . . .	20 կ.
2. Լեբեզեզ Ի. Վ.—Ինչպես ե առաջացել յերկիրը . . . . .	30 »
3. Գաբրիելան Ռ.—Ովկիանի թագավորը . . . . .	15 »
4. Կարիեցեզ.—Ելեքտրիֆիկացիայի պիոներ եզիստներ	
5. Ելայիչ Յեզ.—Կենդանական և բուսական աշխարհ- ների փոխհարաբերության մասին	25 »
6. Սարգսյան Ն.—Զարմանալի զենքեր . . . . .	35 »
7. Գաբրիելան Ռ.—Ճագարամուկը, բզեզների յետևից	25 »
8. Սարգսյան Ն.—Կենդանի ճրագներ . . . . .	25 »
9. Նանսեն Էրիսլով.—Գիշերվա խավարի և սառույց- ների մեջ I հտ. . . . .	60 »
10. Գաբրիելան Ռ.—Մողեսների աշխարհում . . . . .	25 »
11. Նանսեն Ֆ.—Գիշերվա խավարի և սառույցների մեջ հտ. II . . . . .	75 »
12. Կարիեցեզ.—Դեպի անհայտ հեռուներ . . . . .	75 »
13. Պիմենովա, Ե. Վ.—Ողապարիկով դեպի Գրենլանդիա . . . . .	60 »
14. Ս. Պ. Նեչայեզ.—Ստորերկրյա ուժերի աշխատանքը	1 ո.
16. Ն. Ս. Ռուբակին.—Բնության մեծ և անեղ յերե- վույթները . . . . .	75 »

Դիմել Հայգիրք՝ ակց. ընկ. բոլոր գրախանութ-  
ներին յեվ բաժանամուսններին.

13496